

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՈՒՄ

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиς, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամէն լիցւում:

Ցայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բժշկական Տիգրան և Վարսենիկ Գեորգեզեանները ցատկ սրտի յայտնում են իրանց ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, որ ամսիս 7-ին Բագուի ա-
րիւնալի դէպքերին զոհ գնաց՝ առաջին սիրելի եղբայր, իսկ երկրորդը՝ յարգելի
տագը՝ առեւտրական բանկի ծառայող և նախկին ուսուցիչ:

ՍԱՄՍՈՆ ԳԵՂԱՐՈՒՄԻՆ

և խնդրում են շնորհ բերել հոգեհանգիստեանը, որ կատարվելու է վաղը, հինգշաբթի,
ամսիս 24-ին, Մոսկով. Ս. Գեորգեզեանները: Հոգեհանգիստը կը սկսվի ժամը 12-ին,
Ս. Պատարագից յետոյ:

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գնումները գործը. Վերջին տեղեկութիւն-
ներ. Ներքին ՏԵՍԻՍԻՍԻՆ. Երևանի խոտ-
վորները. Բագուի դէպքերը. Բագուի ժո-
ղով. Թատրոն և երաժշտութիւն. Երբեք
լուրեր. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ:

ԲՆՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ

Բագուի նահանգական դատարանի
պրօկուրորը ժողովում է նիւթեր պար-
զելու Բագուի կոտորածի էությունը: Նա
ցանկալի է համարում, որ նրան հասցնվեն
նոյն իսկ լրագրական խմբագրութիւնների
մէջ եղած այն կարևոր հարցադրու-
թիւնները, որոնք որ և է պատճառով
անկարող են եղել լոյս տեսնել:

Մենք էլ ստացել ենք շատ թղթակցու-
թիւններ, որոնց մէջ կան պատասխանա-
տու կէտեր և պահանջներ են, որ նրանց
գրողը պատրաստ լինի իր հարցադրու-
թիւնները սեփական ստորագրութիւնով
կամ վկաներով: Մենք շատ թղթակցու-
թիւններ հրատարակեցինք միայն ազգա-
նունների գլխատուերով, որովհետեւ նրանց
հեղինակները չէին ցանկանում իրանք
իրանց անուններով աստիճան գալ, եր-
կիւղ կրելով, որ մի գուցէ ապագայում
որ և է անսխառութեան հանդիպեն
գործնական կեանքում:

Բայց կան և շատ անձեր, որոնք ամե-
նին չեն քաշվում իրանց անունը տա-
լուց և պատրաստ են սեփական ստորա-
գրութեամբ նոյն իսկ նստաքի վաւերա-
ցումով անել կարևոր ցուցումներ և այդ-
պիսով նպաստել ճշմարտութեան պարզե-
լուն:

Ինչպէս յայտնի է, Բագուում իշխան Ա-
միրխանովի նախագահութեամբ կազմված
է մի քննիչ յանձնաժողով, որ պէտք է
ամենամանրամասն կերպով ուսումնասիրէ
Բագուի աղէտին վերաբերեալ բոլոր ման-
րամասնութիւնները և լոյս սփռէ տեղի
ուսնանալով դժբաղդ դէպքերի շարժառիթ-
ների և պատճառների մասին:

Մենք մեր կողմից կարող ենք միայն
յօրգրել, որ ամեն ոք, որ ունի իսկա-
պէս լուրջ և էական ցուցում, ներկա-
յայնէ յանձնաժողովին և այդպիսով ձե-
լացնէ այն նիւթերը, որոնց հիման վրա
պէտք է յանձնաժողովը կազմէ իր եզ-
րակացութիւնները:

Մենք շատ պատմութիւններ ենք լսում
աղանաղանքից, պատմութիւններ, ո-
րոնք յաւանքութեամբ ունեն պարզելու էա-
կան կէտեր Բագուի աղէտի գործում,
բայց եթէ այդ պատմութիւնները կը
մնան միայն իբրեւ մասնաւոր զրոյցների
առարկաներ և չեն ստանայ դատաստա-
նական վաւերական նիւթերի և ապա-
ցոյցների նշանակութիւն, նրանք չեն կա-
տարի այն կարևոր դերը, որ նրանց վե-
րապահված է:

Բնութեան լրջութեան և անաչառու-
թեան համար անհրաժեշտ է, որ բոլոր
գրողներն ունենցող վկայութիւնները
ծառայեն իբրեւ նիւթ քննիչ յանձնաժո-
ղովի համար:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երէկ երեկոյան ստացանք հետեւեալ հեռա-
գիրը մեր Երևանի թղթակցից:

Երևան, փետրվարի 22, ժամը 4 և 15 րոպ.

«Առաւօտեան Լուսաւորիչ» եկեղեցում
մասնետական հոգևորականութեան, նա-
հանգապետի, իշխան Օրբէլեանի, քաղա-
քագլխի, միւս իշխանաւորների և երկու
ազգութիւնների հաղարատը հասարակու-
թեան ներկայութեամբ հոգեհանգիստ կա-
տարվեց սպանվածների համար:

Վիճակաւոր առաջնորդ Կարապետ վար-
դապետը դիմեց ներկայ եղողներին մի
զգացված քարոզով, որի մէջ խօսեց եր-
կու եղբայր ազգութիւնների շահերի ընդ-
հանդիմութեան և եղբայրասպանութեան դա-
դարման մասին, երախտագիտութիւն
յայտնելով նահանգապետին և իշխան Օր-
բէլեանին խաղաղութեանը նպաստելու
ծնենալիքով ետանդում միջոցների համար:

Հանդիսաւոր թափօրը դիմեց դէպի
գլխաւոր մզկիթը, ուր հասարակութիւնը
ստուարացաւ: Այստեղ ճառեր արտասա-
նեցին հետեւեալ անձերը. Մասնետական
հոգևորականները խօսեցին մի Աստուած
դաւանող երկու ազգերի դարեւոր եղբայ-
րական կապերի մասին: Նահանգապետը
խօսեց եղբայրութեան մասին: Փանահ-
խանը խօսեց տեղի ունեցող խռովու-
թիւնների անմատութեան մասին: Լևոն
Մուշեղեանը խօսեց երկու ազգերի երի-
տասարդութեան պարտականութիւնների
մասին ընդհանուր հայրենիքի վերաբերու-
թեամբ:

Բոլոր ճառերը ողջունվեցին բուռն
ծափահարութիւններով: Այդտեղից բոլորը
դիմեցին դէպի մզկիթները, եկեղեցիներ-
ը, հասարակութեան խմբաված տեղերը,
ամենուրեք խաղաղացնելով ժողովուրդին:

Ուսուցչական սեմինարիայի մօտով
անցնելիս թուրք աշակերտները աղա-
ղակեցին «անիծվի շէյթանը»:

Մտերմական թափօրին մասնակցողնե-
րը ցրվեցին իրանց տները:

Սահմանափակ բացվում են: Բոլորի բե-
րանից լսվում են եղբայրութիւն և միու-
թիւն բառերը:

Մուշեղեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՍԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ԽՈՌՈՎՈՒԹԻՒՆԸ

20 փետրվարի, ժամը 3-ին

Միտոս ձևվում է, երբ մտաբերում են այն
իրարանցումը, որ տեղի ունեցաւ այսօր Երե-
ւանում, մի ժամվայ ընթացքում:

Ինչ վախ, ինչ շփոթ առէր որ մի վայրկեա-
նում չը բռնեց ամբողջ քաղաքը. էլէքտրական
ցնցումը, կարծէր, մի ակնթարթում անցաւ
բոլորի երակներին միջով: Շուկայից բոլոր փո-
ղցներով հեղեղի նման ընթանում էր հոսան-
քը դէպի ծայրերը, մարդիկ շփոթված մտնում
լով փողոցներ և համալսարանների տեղերը,

էին տները և ընտանիքին աչք տալուց յետոյ
դուրս գալիս մի անգին շփոթ էլ ընտանիքի
մէջ առաջ բերելով: Մարտաբը ընդհանուր էր:
Կիրակի օր լինելով, հայերի խնամքները
կողպած էին. մի ակնթարթում էլ թուրքերը
կողպեցին և շուկան դատարկվեց: Պատճառը
հետեւեալն է:

Առաւօտեան ժամը 10-ից դեռ ևս մի 10—15
րոպէ անց, շուկայում, ուր կիրակի օրերը,
առհասարակ, մեծ բազմութիւն է հաւաքվում,
երկու թուրքեր կուռն և միմեանց վրա ա-
տրճանակ են արձակում. ոմանց ասելով
այդտեղ գտնվող հայերը միջամտում են խաղա-
ղացնելու նպատակով. սակայն շատերն թոււմ
է, թէ հայ ու թուրք են կուռնները և այդ-
տեղից առաջ է գալիս շփոթն ու իրարան-
ցումը: Իսկ ոմանց ասելով, հայերը չեն էլ մի-
ջամտել, այլ ապրճանակի պայթիւնները ինք-
նին առաջացրել են այդ շփոթը: Այսպէս թէ
այնպէս այդ շփոթի և փախուստի միջոցին մո-
տակայ «ղափարանայից» գինված թուրքեր
դուրս են պրծել և արձակել հայերի վրա
գնդակներ, նոյն յարձակումը եղել է նաև
«Ղափարանայից»: Այդ յարձակումների հե-
տանքն եղաւ 12 վիրաւորներ, որոնցից 9
հայ, 1 հրէա և 2 թուրք: Հայերից երկուսը
մեռան 2 անյուսալի են: Հրէան ընդունվել է,
որպէս հայ. թուրքերից մէկը վիրաւորվել է
իրան հետ կուռն թուրքից, իսկ միւս թուրքը
չէ իմանում ով է իրան վիրաւորողը. թերեւ
նոյն իսկ թուրքի գնդակից նա վիրաւորված
լինի:

Ընդհանուր կարծիք է, որ այս ամբողջ շփո-
թութիւնը և սպանութիւնները հետևանք են
մի հասարակ թուրքացութեան, սակայն չեն
բացատրում այն յարձակումները և սպանու-
թեան փորձերը, որոնք տեղի ունեցան հոգա-
կաւոր «Ղափարանայից»: Արդեօք ամբողջ
անցքը թուրքացութեան պիտի վերաբերէ,
թէ «Ղափարանայից» եղած յարձակումը մի
ծրագրած բան էր, թէկուզ մի նեղ շրջանի
կողմից եղած: Այս թերեւ պարզվի յետոյ:

Շփոթն ու իրարանցումը, ամենաւանդ սպան-
վածների և վիրաւորների ներկայութիւնը
զբոսուցում առաջ բերին հայերի մէջ, որոնք
մեծ մեծ խմբերով դուրս եկան և ընդհան-
րապէս փողոցները, մանաւանդ պողոցայի
շրջապատը: Որքան էլ նրանք պատրաստված
էին բայց և այնպէս ոչ մի անկարգ բան տեղի
չունեցաւ նրանց կողմից, չը նայելով, որ թուր-
քեր գալիս անցնում էին:

Իսկոյն դուրս եկան նահանգապետը, փոխ-
նահանգապետը, զօրքերի հրամանատար գե-
ներալ Օրբելիանը, Արաւիկայի խանը, քաղա-
քագլուխը, հայոց առաջնորդ Կարապետ
վարդապետը, նաև թուրքերի ղազին և երկու
մուսուլմաններ. դրանք կառնեց շատած շըր-
ջեցին փողոցները և ուր համալսարանների կա-
յին, քաղաքից համալսարանութիւն և մտքե-
րի խաղաղութիւն:

Ապա խմբվեցին քաղաքային խորհրդի դահ-
լիճում հայեր և թուրքեր մօտ 60 հոգի: Այստեղ
եկան նաև առաջնորդը, ղազին և ժողովները:
Առ այժմ հետեւեալ որոշումներն արեցին: Նախ
գլխի նահանգապետին և խնդրել այժմեան
ոստիկանապետի տեղ ժամանակաւորապէս նը-
շանակել դաւաճապետ Առաքելովին: Երկրորդ,
ի նկատի ունենալով, որ այս դէպքի լուրը
կարող է չափազանցացրած կերպով դաւաճ-
ները հաննել և այնտեղեք խռովութիւններ
պոռնալ բերել, ժամանակ ուր Նախիջևանից և Օր-
բէլեանից թուրք տարրի կողմից արդէն վատ
լուրեր են հասնում, որոնց հետագիւր Օրբէլեանը,
Նախիջևան, Բաշկորաշէն, Իզդիր, Ալեքսանդ-
րով և Նոր-Բայազէդ, որ երկու պարսիկնե-
րի միմեանց հետ տեղի ունեցած կռիւ պատ-
ճառով շփոթութիւն առաջ եկաւ, որի ժամա-
նակ վիրաւորվեցին մի քանի հոգի, բայց կար-
գը վերականգնված է և ազգաբնակչութիւնը
խաղաղ ու իրար հետ հաշտ են: Եւ երրորդ,
ընտրվեց 40 հոգուց, (Իւրաքանչիւրի կողմից
20-ական) բաղկացած մի մարմին, որը շրջ-
ում փողոցներ և համալսարանների տեղերը,

խաղաղացնելու է մտքերը և կարգ պահպանե-
լու:

Այս բոլորի մասին պիտի իսկոյն յայտնվի
նահանգապետին: Մարմինը պիտի շատ և շատ
նիստեր ունենայ:

Փողոցներում շրջում են ստրամբիկներ, կո-
զակներ և զինւորներ: Ազգաբնակչութեան մեծ
մասը փողոցներումն է: Կարգի խանգարման
նշաններ չեն երևում:

Գրում եմ այս տողերը շատ շտապ, օրվայ
տպաւորութեան տակ, խիստ ճնշված, ու ան-
կապ կերպով:

Ա.—Դօ

ԲԱԹՈՒՄԻ ԴԵՊԵՐԸ

Բագուի դէպքերը յուզել, մերկել էին և
Բագուի ազգաբնակչութեան մտքերը: Այդ
կոսմոպոլիտ քաղաքում, ուր կարելի է գտնել
կովկասի բոլոր ազգութիւնների ներկայացու-
ցիչներ, հայերը, համեմատաբար, փոքրամաս-
նութիւն են կազմում և գլխաւորապէս բան-
ւորներ են ու մշակներ:

Բագուի կոտորածի լուրերը, բնականաբար,
մեծ յուզմունք են առաջ բերում: Տեղական
փոքրաթիւ հայ, վրացի և մուսուլման-վրացի
ինտելիգենցիան որ և է ապագայ ընդհարման
առաջն առնելու համար խորհրդակցութիւններ
են կատարում և աշխատում, որ մինչև այդ
օր տիրող բարեկամութեան և համերաշխու-
թեան կապերը քրիստոնեայ և մուսուլման
տարրերի մէջ չը մտայնվին որ և է պատահա-
կան կամ չարամիտ մարդկանց կողմից նիւթ-
ված դէպքերով: Փետրվարի 17-ին առաւօ-
տեան յայտնվում է, որ գիշերով շատ հայերի,
ինչպէս և մի քանի ուսուի և մի մուսուլմանի
աների դուռն վրա կարծի խաչի նշաններ են
քաշված. այդ լուրը մեծ յուզմունք պատճառ
է դառնում. տարածվում են լուրեր, թէ մու-
սուլմանները պատրաստվում են հայերին կո-
տորել: Անմիջապէս, ազգաբնակչութեան ին-
տելիգենտ մասի նախաձեռնութեամբ մի մեծ
ժողով է գումարվում մուսուլմանների մզկի-
թում, ուր Բագուի սիւնի հոգևորականու-
թեան պետը, քաղաքի ալլա մուսուլմաններ,
ինչպէս հայերը, վրացիները և ուսանողը քա-
ղաք և ճառեր են խօսում և մօլլան անէծք և
նզով է կարդում այն մուսուլմանի գլխին,
որ թոյլ կը տայ իրան որ և է ամենափոքր
յարձակումն գործել որ և է հայի կամ քրիս-
տոնեայի դէմ և առաջարկում է երկու: Ա-
մենք երգվում են: Կատարվում է մզկիթում
հոգեհանգիստ Բագուի աղէտի զոհերի համար.
որոշվում է նոյն հոգեհանգիստը կատարել
հայոց եկեղեցում:

Բագուի հայ հասարակութիւնը անհրա-
ժեշտ է համարում Թիֆլիսի պ. քաղաքագլխի
միջոցով խնդրել, որ Բագուի գնայ Թիֆլիսի
առաջնորդը, որի ներկայութիւնը կարող է
նպաստել մտքերի խաղաղացման հայ հոտի
մէջ: Այդ պարագայով փետրվարի 18-ի Թիֆ-
լիսից Բագու են մեկնում Սաթուխան Գա-
րեգին եպիսկոպոսը, Յուսիկ վարդապետը և
Կաթողիկոսից հաստատված յանձնաժողովի
կողմից նրա անգամ Հ. Առաքելեանը:

Մենք հասանք Բագու փետրվարի 19-ին,
ցերեկվայ ժամը 12-ին, փոխանակ հաննելու
առաւօտեան ժամը 7-ին. գնացքը այժմ ամեն
օր ուղանում է 5—6 ժամ, որովհետեւ գիշեր-
ները շատ դանդաղ է գնում, հազիւ ժամը 15
վերստ է անցնում. երկիւղ են կրում յարձա-
կումից: Կայսրապետի անմիջապէս գնացելը ե-
կեղեցի, ուր խնամված էր հայ ժողովուրդը և մի
կարճ աղօթք ու քարոզ արտասանելուց յետոյ,
առաջնորդը յայտնեց, որ երկրորդ օրը, փե-
տրվարի 20-ին կը կատարվի հանգիստը
հոգեհանգիստ: Այդտեղից մեկնեցինք պ. Չի-
լիսկարեանի տունը, որտեղ սկսեցին այցելու-
թեան գալ թէ հասարակութեան զանազան
խաւերի ներկայացուցիչներ և թէ պաշտօնա-
կան անձինք, նահանգապետի օգնականը, ու-
սուլմանապետը, բերդի կոմիսարի օգնա-
կանը, քաղաքապետը և այլք: Առաջնորդը և

Բագրուի նահանգական դատարանի պր
բորը տեղեկացրիլ է «Бакин. Изв.» ԼՐ
խմբագրությունը, որ Բագրուի փերովարը
9-ի դեպքերի առիթով նախնական քննա
սկսված լինելու պատճառով, ցանկալի է
ներ, որ այդ առիթով թէ ընդհանուր
ճառները և թէ մասնատոր դեպքերի մասին

քան կարելի է մանրամասն տեղեկութիւններ և լուսարանութիւններ լինեն: Դրա համար պ. պրօֆուրորը խնդրում է խմբագրութիւնից ուղարկել իրան խմբագրութեան ունեցած յօդուածները, որոնք այս կամ այն պատճառով չեն թրջատրել տպագրելու:

Բազուկ լրագրիւնների վերաբերութեամբ ցենզորի պաշտօն կատարող փոխ-նահանգապետ իրենց պաշտօնական թղթով յայտնել է Բազուկի պարբերական հրատարակութիւններին, որ այսուհետև իրանց հրատարակութիւնները նախ քան իրան ներկայացնելը, ուղարկեն գրադարանային նահանգապետ իշխան Ամիրախ-վարիին ի հաստատութիւն, համաձայն մասնուր օրէնքների:

Բաթումից հաղորդում են, որ բոլորովին զարգացել է նաւերի երթևեկութիւնը: Այս երկու օր է, որ Բաթումի գործարանն ևս չէ բանում:

Արդահանի հայ հասարակութիւնը առանձին հեռագրով յայտնել է իր շնորհակալութիւնը թիֆլիսի թաղաքագրութիւնի վերաբերմանը՝ նրա մատուցած ծառայութեան համար Բազուկի հայերի և թուրքերի խաղաղացնելու գործում:

Ճնորդի Փոքրցիլի լրագրի մէջ կարդում ենք. «Անդրկովկասեան երկաթուղու արհեստանոցի մշակները սպասում են, որ երկաթուղական բարձր վարչութիւնը շուտով բաւարարութիւն կը տայ իրանց պահանջներին: Մեր լրագրում արդէն յիշված էին բանւորների պահանջները. բանւորները, ի միջի այլոց, և այն մշակները, որոնք բանտարկված են, արձակվեն և իրանց պաշտօններն ստանան: Երկաթուղական բարձր վարչութիւնը խոստացել է, ասելով թէ կաշխատեն, որ բանւորները արձակվեն բանտից և իրանց պաշտօններն ստանան»:

Փետրվարի 17-ին Բազուկի բօրայի ընկերութիւնն ունեցել է ընդհանուր ժողով Ս. Ս. Թաթարնոսեանի նախագահութեամբ: Նախագահը յայտնել է, որ այս 2-ամիսներ ընթացքում Բազուկի կեսնքի մէջ տեղի ունեցած հրեաների բոլոր ցնցումները արդէն այն է եղել, որ 60 միլիօն պուլէ նաւթ պակաս է արդիւնաբերութիւն: Տեղական արդիւնաբերութեան վրա չափազանց կործանիչ կերպով ազդել են վերջին արհեստագործութիւնները: Ոչ ձիւնը, ոչ բանւորների անկմը գործադուլները, ոչ էլ պատահական այլ պատճառները չեն կարողացել այնպէս քայքայիլ դեր կատարել տեղական ինդուստրիայի վրա, որքան վերջին դէպքերը—կենսիկ և գոյքի անապահովութիւնը: Ազգաբնակչութիւնը թողնում է հեռանում է նաւթաշրջանից, հանքերն ու գործարանները դատարկվում են բանւոր ձեռքերից: Արդիւնաբերութիւնն ընկնում է, առկուրը անակութեան ստանում: 170 վաճառականներ արդէն խնդր են ներկայացրել բօրայի կոմիտէին միջնորդելու ֆինանսների միւնիստրին, որ նշանակութիւն չը տրվի փետրվարի 7-ից տուած մուրհակների բողոքներին: Ժողովը որոշել է միանալ նաւթարդիւնաբերողներին լծելու արդար և խիստ ընտելութիւն պահանջելու համար: Բացի դրանից—որոշել է ուղարկել բոլոր լրագրիւններին մի շղջաբերական հեռագիր՝ բողոքելով այդ լրագրիւնների և թղթակցների դէմ, որոնք դիտարկելով կերպով աշխատում են ազգային զեն ու տնտեսութիւն սնունդի և այդ հեռագիրն ստորագրելու են 15 հայ, 15 մահմեդական և 30 ռուս ու այլ պատուաւոր քաղաքացիներ Բազուկից:

Ալեքսանդրօպօլից մի խումբ օֆիցէրներ հետեւել նամակ են ուղղել H. ՕԵ. լրագրիւն. «Մինչև հոգու խորքը վրդովված լինելով Բազուկի վերջին արեւմտիկ դէպքերից, մենք, ի հարկէ, չենք կարող չըմիտնալ պ. Կրուշինսկու ազնիւ կոչինք: Մենք ուղղում ենք հաւատարմ, որ լոյս կը սփռվի այդ խայտառակ դէպքի պատճառների վրա: Դա կը լինի միակ խելացի միջոցը հասարակական կարծիքին բաւարարութիւն տալու: Մեր կողմից մենք մեր պարբեր ենք համարում օգնութեան հասցնելու ֆլասովածների ընտանիքներին»:

Ալեքսանդրօպօլից մեզ գրում են. «Ինչպէս սրանից առաջ, ամսին 17-ի նամակով յայտնել էի, այսօր, ամսին 20-ին, տեղիս ս. Փրկիչ եկեղեցում եղաւ հոգեհանգիստ Բազուկի

ուսմ գոհվածների համար: Յիշեալ եկեղեցին, նութիւնները: Նրանք առողջ են և տեղաւորվեցին հիւրանոցներում քաղաքի հաշով: Կի՛ն՛, երկրի կառավարչի նախագահութեամբ կայացաւ առաջին ժողովը Ալեքսանդր II Կայսրին արձան կանգնեցնելու: Արձանի բացումը, նոյնպէս և Կայսրի անունով ժողովը կազմակերպեցին հաստատութիւնը՝ մտադրութեամբ կայարարեցին զիւղացիների ազատութեան 50-ամեակին: Որովայն է հրաւիրել բանիմաց մարդիկ յատակագիծ կազմելու մեքենութեան:

ՊԱՐԻՉ: Մենտօնից Լօնդօն գնալիս՝ Բօլշաքական իշխանը ինկօքիտօ անցկացաւ Պարիզով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 փետրվարի: Թագաւոր Կայսրին Յարսկօէ Միլօի մեծ պալատում ներկայացան ծովային կորպուսի գարդմարիները և ծովային ինժեներական դպրոցի սանները: Նորին Մեծութիւնը բարեհաճեց դիմել նրանց հետեւել խօսքերով «Ես ուրախ եմ այս անգամ տեսնել ձեզ այստեղ միասին գարդմարիներին, թէ ինժեներներին և հաւասարած եմ, որ այդ հանգամանքը կրթաւայել լաւ ազգաւոր ձեռն ապագայ միասեղ ծառայութեան համար եւ որ դուք կրպանանցէի իրաւ հետ լաւ արագին յարաբերութիւններ եւ միտք իւր կրկնէի իբր մեծիմ եւ ազնիւ բնկերներ: Յիշեցէք, պարոններ, որ մանաւանդ այժմ, երբ Ռուսաստանը անց է կացնում ծանր ժամանակներ, պէ՛տ է բոլոր սերս կեցող միայն հայրենիքի պաշտք եւ փառք պատգամներով համար: Նրա առաջնորդ թաղի հարուածներից եւ հոգով չընկնելով, արութեամբ եւ անձնութեամբ ծառայել հայրենիքին եւ ինձ, ջանալով հասնել ցանկալի այդ դրութեան: Ես շատ ուրախ եմ իմ ցանկաւորներ կասարկած տեսնելով—այսինքն՝ տեսնել հաւասարի ինժեներ-մեխանիկներին օժիցէրական աստիճաններում: Յայս ունեմ, որ դուք կարգաւորեցէի ձեզ ցոյց տուած վստահութիւնը եւ շնորհաւորում եմ ձեզ բոլորիդ սիւնան եւ, պարտաւորեցի ձեզ անգամ վստահութեամբ եւ ազնուութեամբ կրպանեցի իրանց պարսէր եւ առին այն ամենը, ինչ որ կարող էիս: Համոզված եմ, որ դուք էլ կանգնէի ձեզանից կալված ամեն ինչ, որպէսզի պահպանէի մեր հաւասարի փառք: Յանկանում եմ ձեզ ձեռն առաջիկայ ծառայութեան մէջ ամեն լաւ բան»:

ՊԱՐԻՉ, 21 փետրվարի: Այս առաւօտ Զինատանից և Եպիսկոպոսից Մարտիլ եկաւ պատարիք լեւոնեան Սիմօն շողեանը: Զամբորդները թէւում եկան զթութեան քոյր Ձերկաւորման Պօրտ. Արտուրից և պրինց Պայմէ Բուրբոնը, որ 4 ամիս արձակուրդ ունի և ճամբորդում է ծածուկ: Պրինցը հրաժարվեց թղթակցների հետ խօսակցելուց, միայն գովեստ յայտնելով Կուրօպատիկներին: Պրինցի կարծիքով՝ Մօնզօլիան կարող է կերակրել 500,000. նոց մի բանակ: Պրինցին յանձնված էր Կուրօպատիկներից հարգանքով Պօրտ. Արտուրին պաշար մատակարարելու, այդ նպատակով նա իբր իտալացի թղթակցից, մի քանի ճամբորդութիւններ է արել Սինիստինի և ծովափի միջև: Զամբորդներին մէջ եղած ռուս օֆիցէրներն ասում էին, որ անհրաժեշտ է եպիսկոպոսներից խել ծովը: Յամաքային կուրներին արդիւնները միշտ կը մնան անորոշ, քանի դեռ ծովը կը լինի եպիսկոպոսների ձեռքին և քանի նրանք կարող կը լինեն հասցնել զօրքին պաշար և ծանրակութիւն:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

21 փետրվարի
ՀՕՆԿՕՆԳ: Գերմանական «Նուբիա» շողեանը փետրվարի 19-ին, Հօնկօնգից 100 մղոն դէպի հարաւ-արեւելք տեսաւ երկու եպիսկոպոսական էակաւորաւ: մէկը թաղկացած էր Զ զրահակերներից և կրէյսէրներից: Կրէյսէրները գրնում էին սաստիկ արագութեամբ, հանգքած կրակներով: Եպիսկոպոսները ցողացողիներով լուսաւորեցին գերմանական շողեանը: Այս էակաւորան նշարվեց առաւօտեան ժամի 2-ին: Միւս էակաւորան երեւում էր կէսօրից յետոյ: Միւսի: Ժամանց վիճալի շղջանի հոգաբարձուի օգնականը, որ ուղարկված է միջոցներ ձեռք առնելու՝ դպրոցական հաստատութիւնների մէջ կատարեալ կարգ վերականգնելու համար:

ԼՕՆԴՕՆ: Դիպլոմատական շղջաններում և հասարակութեան մէջ եւանդով ընկնում է բոլորական իշխան Ֆերդինանդի դաւաճումը: Նա Լօնդօն կը հասնէ վաղը և պաշտօնապէս կընդունվի բոլոր պատիւներով: Վաղը երեկոյեան պալատում տեղի կունենայ հանդիսաւոր բանկէտ, որ Էդուարդ Թագաւորը տալիս է ի պատիւ բոլորական իշխանի: Նկատվում է հակում վերադարձնելու այդ այցելութեան մի յայտնի չափով նշանակութիւն՝ մակեդոնական հարցի հետ կապված: Յամանային դէպք, լուրերը բոլորական փոխառութեան և անգլիական գործարանների բոլորական զօրքի համար ռազմավարների պատուէր տալու մասին հասարակ ենթադրութիւններ և անկողններ են: Վիէննա, Կոնստանտին, լուրերական ժողովը կընկալուի ֆրանկոսերման պատուաւոր նախագահը, հաղորդում է, որ Կայսրի մօտ ունեցած ռեզիդենտի մասին ընկնում էր հարցը այն պայմաններին մասին, որոնցով կարելի է կազմել միւնիստրութիւն բոլոր կուրսակցութիւններից: Կայսրը խնդրեց Ձիշին ջալացիութիւն ցոյց տալ կրկին լուծելու համար: Բանֆի նոյնպէս յայտարարեց կայսրին, որ առանց մեծ զիջումների այն հարցերում, որոնք վերաբերվում են զօրքին և երկիրը անտեսական կողմից բաժանելուն, անկարելի է հասնել կոմպրոմիսի:

ԱԵԱՅԵՐԿ: Նաւահանգիստում կանգնած առաջատար նաւի չորս ռուս նաւաստիներ և Ֆրանսիական 163-դ հետեակ զնդի երկու զինւորների մէջ ծագած դրամական վէճերի պատճառով, տեղի ունեցաւ կոլու, որի ժամանակ ռուսները զինւորներին հարուածներ հասցրին դանակներով: Վերաբերվածների դրութիւնը լուրջ է: Ռուս նաւաստիները կալանաւորված են:

ԱՅԵՐԿ: Ընտրութիւնները անցան կատարեալ հանգստութեամբ: Ընտրված են համարեա քաղաքապէս Դէլիսիսի կողմակիցները: Բոլոր միւնիստրները ընտրված են: Վիէննա, Կայսրը՝ միւնիստրական ճգնաժամի առիթով ընդունեց, բացի կոնստանտինից և Բանֆից, նոյնպէս և Ունգարական պատգաւաւոր Մաքս Ֆալկին:

ՎԼԱԴԻՎՈՍՏՕԿ: (Սեպ. թղթ.): Որովհետեւ քաղաքային կատարում միջոցներ բոլորովին պակաս են, այդ պատճառով քաղաքը չէ կարող պաշար պատրաստել այն դէպքի համար, երբ պաշարվի. դրա համար բերել կոմիսիոն խնդրեց պետութիւնից փոխառութիւն քաղաքի համար և իր վրա առաւ այդ պաշար պատրաստելու գործը:

ՕԴԵՍՍԱ: Այսօր «Պրինցէսսա Եւգենիա» նաւով ժամանեցին 60 պօրտ-արտուրիներ: Նրանց դիմաւորեցին քաղաքապետը և իշխա-

կառի կառավարչապետի պաշտօնակատարին տալ պատերազմական վիճակում գտնվող վայրերի մէջ զինւորական իշխանութեան յատկացված իրաւունքները և քաղաքացիական վարչութեան ազմիւնստարտով օգգաններին յատուկ իրաւունքները և պարտականութիւնները պետական կարգը և հասարակական խաղաղութիւնը պահպանելու վերաբերութեամբ: Փետրվարի 18-ին նշանակված էր բանւոր ընտրողների կողմից յատուկ ներկայացուցիչների ընտրութիւնը այն յանձնաժողովին մասնակցելու, որը պէտք է պարզէր Պետերբուրգի բանւորների անաւականութեան պատճառները: Դեռ մինչև ընտրութիւններ ընտրողները յայտարարութիւն էին տուել յանձնաժողովի նախագահին, որ նրանք ընտրութիւններից կը հրաժարվեն, եթէ որ բաւարարութիւն չը տան իրանց այն պահանջներին, որոնք յիշված են վերաբերալ յայտարարութեան մէջ: Յանձնաժողովի նախագահը յայտարարեց, որ պահանջներից շատերը չեն կարող բաւարարութիւն ստանալ, որովհետեւ դուրս են յանձնաժողովի նախագահի վրա դրված պարտաւորութիւններից և իրազօրութիւններից. այդ պատճառով եղած ընտրողական 9 խմբերից 7-ը հրաժարվեցին ընտրութիւններ կատարելուց և այդպիսով յանձնաժողովի ստեղծումն այն կազմով, ինչով որ նախացուցած էր Նորին Մեծութիւնը, չէր կարող իրականանալ՝ բանւորների ներկայացուցիչներ չընտրվելու պատճառով: Այդ աչքի առաջ ունենալով՝ Թագաւոր Կայսրը փետրվարի 20-ին Բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ դադարեցնել յանձնաժողովի գործունէութիւնը՝ հետեւանդիայի նահանգապետ իսկական պետական խորհրդական Բելգարտին Բարձրագոյն հրամայված է լինել մասնուր գործերի զխաւոր վարչութեան պետ:

ԳՐՕՉԻՅՑ, 21 փետրվարի: Գործնիւմ սաստիկ յուզված տրամադրութիւն է տրուում: Ընտանիքաւորները գնացնելով սեկնում են Բոստօլի կողմերը: Բանկը և գանձարանը պաշտպանվում են զօրքերով: Քաղաքի մօտ կանգնած են զօրքեր:

ԲԱՊՈՒ, 21 փետրվարի: Երկար լուրերից յետոյ Բոստօլում նկատվում են կենսիկ մի քանի շնորհներ:

ԼՕՆԴՕՆ: Բուլգարական Ֆէրդինանդ իշխանը ժամանեց Դուբր: Սեր Գօրտի Ստեֆան ողջունեց իշխանուհին Էդուարդ Թագաւորի անունից: Իշխանն արտակարգ գնացքով ճանապարհ ընկաւ Լօնդօն, որ ժամանեց երեկոյեան եօթ ժամին: Կայարանում նրան սպասում էին Ուէլսի իշխանը, Լանդօուսի ներկայացուցիչը և թիւրքական դեսպանը: Ուէլսի իշխանը դիմաւորեց նրան՝ սրտադին կերպով սեղմելով նրա ձեռքը: Իշխանը երկար խօսակցեց թիւրքաց դեսպանի հետ, որից յետոյ Ուէլսի իշխանի հետ միասին գնաց Բուկինստան պալատը: Թագաւորը և Թագուհին, շղջապատված բոլոր պալատականներով, դիմաւորեցին իշխան Ֆէրդինանդին պալատի մուտքի մօտ: Պաշտօնապէս յայտարարված է, որ սեր Կօնդի Ստեֆեն նշանակված է յատկապէս բուլգարական իշխանի մօտ լինելու նրա այստեղ մնալու միջոցներ:

ՊԱՐԻՉ, 21 փետրվարի: Արտաքին գործերի միւնիստրութեան տեղեկութիւնների համաձայն ճիշդ չէ անգլիական լրագրիւնների հաղորդած լուրը՝ եպիսկոպոսական էակաւորայի երեւալու մասին Հնդկական ուղիներում:

ԹԱԻՄԻՉ: Տեղական ազգաբնակչութեան մէջ յուզում է նկատվում հայերի դէմ:

ԼՕՆԴՕՆ: Եպիսկոպոսական միասնային ստացած պաշտօնական հեռագիրը. «Տօկիօ, փետրվարի 21-ին: Սինիցիքի ռուղութեամբ ռուսները փետրվարի 20-ին առաւօտեան շարունակում էին յամառ դիմադրութիւն ցոյց տալ: Շախէ կողմից վարում եպիսկոպոսական զօրամասեր յարձակում գործեցին բարձունքների վրա Բէնիկուրանից դէպի հիւսիս, 4 մղոն դէպի արեւելք Վանտօանից և փետրվարի 19-ին գրաւեցին ռուսական առաջապահ զբերքը: Միասնամուրացողի ռուղութեամբ գործող եպիսկոպոսական զօրաբաժինը գրաւեց ամսի 20-ին վաղ առաւօտեան ռուսական բեզուկաւ բլրի վրա: Երկաթուղու ռուղութեամբ եպիսկոպոսները փետրվարի 20-ին առաւօտեան գրաւեցին Իւլանտուն, երկու մղոն դէպի հարաւ-արեւելք Վանպաշանից և պաշարեցին այդ գիւղում գտնվող ռուսական զօրաբաժինը: Երկաթուղու արեւմտեան ռուղութեամբ եպիսկոպոսները նոյն թիւն իրեցին Սանչէնցաօ և Սանսուեարօ և արշաւում են աւելի հեռու: Սուեառուն երկաթուղիական կայարանն այրվում է»:

ՏՕԿԻՕ, 21 փետրվարի: Լրագրիւնների հեռա-

22 փետրվարի
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Պրաւ. Բեթ.»-ում տպագրված է Բարձրագոյն ռուսագ, որի մէջ, ի միջի այլոց ասված է. «Հասարակական կարգն ապահովելու և Բազուկում ու Բազուկի նահանգահ տեղի ունեցող անկարգութիւնները դադարեցնելու համար Մենք անհրաժեշտ համարեցինք. 1) Բազուկ և իր նահանգը յայտարարել պատերազմական դրութեան մէջ, տարածելով նրանց վրա այդ վիճակում գտնվող վայրերի մասին գոյութիւն ունեցող կանօնները: 2) Կոմ-

Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мал. ул. № 15